և տպագրած Գրիգորեան Նոր տօմարն էր ձեռամբ Յովհ. Տէրգնցւոյ. կրնայ ըլլալ և անկէ առաջ (1567ին) ի Կ. Պոլիս տպագրեալ Տօնացոյցն։ Կաթողիկոսն (կամ նոր ընտրուած Մելքիսեդն, կամ Դաւիթ Ե) զրեր և պատուիրեր էր առ Կարապետ, որ հանգուցեալ Աւետիք եպիսկոպոսի թոռածն յանձնէ Տէր Յակոբայ, և նա ալ այնպէս կ'ընէ ներկայութեամբ և վկայութեամբ արդէն մեզի ծանօթ Գէորգ Թարգմանի և Տնպահի Հայոց, և Առաքէլի որդի Յակոբի մի, որոց կը ստորագրեն երեք քաղդէացիք և Աստրիք ալ (Եղիա որդի Դոմինիկոսի, Բենեդիկտոս ո. Յակոբայ և Անճելոյ ո. Սերոյբէի). ինչո՞ւ փոխանակ Հայոց՝ այս օտարազգիք կոչուած են ի վկայութիւն. — Թերեւս աւելի ծանօթք ըլլալով † եպիսկոպոսին կամ իր աւանդապահ Կարապետին. կամ իրենք աւելի ծանուցուած անձինք ըլլալով ի Վենետիկ։ — Իսկ մեզի՝ չկարնալով այդ Աւետիք մեռոնաբեր եպիսկոպոսին վրայ աւելի ծանօթութիւն մի գտնել, կը մնայ անոր աւանդընկալ Տէր Յակովբը ճանչնալ և ճանչցընել, ըստ կարելւոյն։

ՎԶԳ

Տպարանիս Տեսչութիւնը կը փութայ ծանուցանել, թէ Հ. Ղ. Ա. Ալիշանի մեծագործ Հրատարակութեան տպագրութիւնն աւարտած է, ուստի կը խնդրուի այն Մեծ. Բաժանորդներէն, զոր դրամն արդէն վճարած են, իրենց ղրկուած ընկալագիրն, իսկ որոնք ամբողջ բաժանորդագինը դեռ չեն վճարած ամբողջովին, հաճին ընկալագրոց հետ՝ մնացած մասն ևս բաժանորդագնոյն մեզ հասցընել, որպէս զի ժամանակին ընդունին զայն։



digitised by A.R.A.R.@